

<i>Համարը N 703-Ն</i>	<i>Տեսակը Մայր</i>
<i>Տիպը Որոշում</i>	<i>Կարգավիճակը Գործում է</i>
<i>Մկզբնադրյալը ՀՀՊՏ 16.07.08./45(635) Հոդ.765</i>	<i>Ընդունման վայրը Երևան</i>
<i>Ընդունող մարմինը ՀՀ կառավարություն</i>	<i>Ընդունման ամսաթիվը 03.07.2008</i>
<i>Ստորագրող մարմինը ՀՀ Վարչապետ</i>	<i>Ստորագրման ամսաթիվը 09.07.2008</i>
<i>Վավերացնող մարմինը</i>	<i>Վավերացման ամսաթիվը</i>
<i>Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 26.07.2008</i>	<i>Ուժը կորցնելու ամսաթիվը</i>

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ «ՏՈՒԲԵՐԿՈՒԼՈՋԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

3 հուլիսի 2008 թվականի N 703-Ն

«ՏՈՒԲԵՐԿՈՒԼՈՋԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է**.

1. Հիմնադրման ձևով ստեղծել «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ» պետական ոչ առևտրային կազմակերպություն:

2. Սահմանել, որ «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ» պետական ոչ առևտրային կազմակերպության գործունեության հիմնական առարկան և նպատակներն են՝

1) իր իրավասության սահմաններում՝ Հայաստանի Հանրապետության տարածքում տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագրից բխող տուբերկուլոզի դեմ պայքարին ուղղված միջոցառումների իրականացման համակարգումը, կազմակերպումն ու դիտարկումը.

2) տուբերկուլոզի կանխարգելման աշխատանքների իրականացումը և համակարգումը.

3) մեթոդոլոգիական օժանդակության ցուցաբերումը Հայաստանի Հանրապետության տարածքում գործող տուբերկուլոզային և հակատուբերկուլոզային ծառայություններին.

4) տուբերկուլոզի կանխարգելման նպատակով առողջ վարքագծի վերաբերյալ գիտելիքների քարոզչությունը:

3. «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ» պետական ոչ առևտրային կազմակերպության անհատույց և անժամկետ օգտագործման իրավունքով ամրացնել 140442000 դրամ արժողությամբ գույք և սեփականության իրավունքով հանձնել 9998200 դրամ արժողությամբ գույք՝ համաձայն հավելվածի:

4. «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը սեփականության իրավունքով չեն հանձնվում նվազագույն աշխատավարձի 10000-ապատիկը գերազանցող գույքը, պետական սեփականություն հանդիսացող հողերը, շենքերը, շինությունները և պատմամշակութային նշանակություն ունեցող գույքը:

5. «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով, 13-րդ հոդվածի 2-րդ մասի «գ», «դ», «ե» և «է» ենթակետերով ու 14-րդ հոդվածով սահմանված լիազորությունները վերապահել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությանը:

6. Թույլատրել «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ» պետական ոչ առևտրային կազմակերպության իրականացնել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

1) գիտաբժշկական, փորձարարական հետազոտությունների իրականացում.

2) տուբերկուլոզային և հակատուբերկուլոզային ծառայությունների մասնագետների վերապատրաստումների կազմակերպում.

3) տուբերկուլոզի ծառայությունների ոլորտում առողջապահության կազմակերպման, կառավարման, ֆինանսավորման, տնտեսավարման ժամանակակից մոդելների, նորմատիվների և բժշկական ստանդարտների

մշակում.

4) տուբերկուլոզի ոլորտում պարբերական մամուլի հրատարակում:

7. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում հաստատել «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ դրանում նախատեսելով դրույթ այն մասին, որ կազմակերպությանն ամրացված պետական գույքը վարձակալության հանձնելիս՝ ստացված վարձավճարները և այդ գույքի վրա կատարված անբաժանելի բարելավումները Հայաստանի Հանրապետության սեփականությունն են, և սահմանված կարգով ապահովել նշված կանոնադրությունը պետական գրանցում իրականացնող մարմին ներկայացնելը:

8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Հայաստանի Հանրապետության
վարչապետ**

S. Սարգսյան

2008 թ. հուլիսի 9
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2008 թվականի
հուլիսի 3-ի N 703-Ն որոշման

Ց Ա Ն Կ

**«ՏՈՒԲԵՐԿՈՒԼՈԶԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՄՐԱՑՎՈՂ ԵՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՆՁՆՎՈՂ ԳՈՒՅՔԻ**

Անհատույց օգտագործման իրավունքով ամրացվող գույքը				
NN ը/կ	Հիմնական միջոցի անվանումը	Քանակը	Գինը	Հաշվեկշռային արժեքը
1	2	3	4	5
1.	Ավտոմեքենա «ՎԱԶ-21214»	12	3589,7	43076,3
2.	Սառնարան «Թռչիքա»	36	599,2	21569,9
3.	Մանրադիտակ ԲԻ ԷՄ (BM)-180	54	923,9	49891,9
4.	Համակարգիչ «Պենտիում 4»	20	328,6	6572
5.	Համակարգիչ «Պենտիում 4» (հզոր)	1	487,4	487,4
6.	Մոնիտոր	21	120,0	2520,0
7.	Լապթոպ	1	1168,1	1168,1
8.	Պրոյեկտոր	2	233,6	467,2
9.	Պրինտեր (սև-սպիտակ)	3	93,5	280,5
10.	Պրինտեր ԷԼ Ջի (LJ) (գունավոր)	1	258,1	258,1
11.	Սկաներ Ա-4	1	56,1	56,1
12.	Պատճենահանման սարք Ա-3	1	678,6	678,6
13.	Պատճենահանման սարք Ա-4	1	164,5	164,5
14.	Թվային ֆոտոխցիկ	1	187,0	187,0
15.	Թվային տեսախցիկ	1	258,1	258,1
16.	Հեռուստացույց 72	1	311,5	311,5
17.	Հեռուստացույց 54	2	118,0	236,0
18.	ԴԻ ՎԻ ԴԻ (DVD) փլեկեր	1	75,7	75,7
19.	Տեսամագնիտոֆոն	1	95,8	95,8
20.	Ֆաքս «Փանատնիկ»	1	140,2	140,2
21.	Ներքին ցանցի ԱՀԿ (ATS)	1	556,3	556,3
22.	Հեռախոս	25	13,3	332,5
23.	Թարգմանչական թեստ	1	26,8	26,8
24.	Հեռախոս	1	103,9	103,9

25.	Համակարգիչ «Պենտիում 4»	1	401,2	401,2
26.	Համակարգչի մոնիտոր	1	118,0	118,0
27.	Լազերային պրինտեր	1	213,9	213,9
28.	Պատճենահանման սարք	1	505,5	505,5
29.	Անխափան սնուցման սարք (UPS)	1	36,8	36,8
30.	Չիրկիզվող պահարան	2	160,2	320,4
31.	Հակահրդեհային լրակազմ	1	680,5	680,5
32.	Օդափոխիչ 10,0 ԲԻ ԹԻ ՅՈՒ (BTU)	10	318,2	3182
33.	Օդափոխիչ 24,0 ԲԻ ԹԻ ՅՈՒ (BTU)	5	431,7	2158,5
34.	Փոշեկուլ	2	106,8	213,6
35.	Էլեկտրոնային քարշիչ սարք	1	80,1	80,1
36.	Սպասք լվացող մեքենա	1	267,0	267,0
37.	Սառնարան	1	213,6	213,6
38.	Սեղան դեկավարի	1	400,5	400,5
39.	Նախասրահի կահույք (1 բազմոց, 2 բազկաթոռ)	2	186,9	373,8
40.	Խոհանոցի կահույք	1	267,0	267,0
41.	Հանդերձարանի կահույք	1	427,2	427,2
42.	Պալետներ	1	534,0	534,0
43.	Դարակներ	1	534,0	534,0
	Ընդամենը			140442,0
Սեփականության իրավունքով հանձնվող գույքը				
1.	Գրքի պահարան` բաց	1	51,7	51,7
2.	Գրքի պահարան` կիսաբաց	2	58,8	117,6
3.	Գրքի պահարան` փակ	1	72,9	72,9
4.	Աշխատանքային սեղան	1	40,0	40,0
5.	Տակդիր` տպիչի համար	1	25,9	25,9
6.	Տակդիր ակերի վրա	1	42,3	42,3
7.	Նիստերի սեղան	1	84,7	84,7
8.	Տակդիր ակերի վրա	1	32,9	32,9
9.	Լվացարան	1	53,4	53,4
10.	Սպասք	1	267,0	267,0
11.	Սեղան` աշխատանքային	19	32,1	609,9
12.	Սեղան` համակարգչի	20	26,7	534
13.	Պահարան` ակերով	20	13,4	268
14.	Բազկաթոռ` աշխատակցի	20	20,3	406
15.	Աթոռ` այցելուի	40	16,0	640,0
16.	Պահարան` բաց	10	53,4	534
17.	Պահարան` փակ	10	80,1	801,0
18.	Կախիչներ	10	18,7	187,0
19.	Սեղան	7	53,4	373,8
20.	Աթոռ` այցելուի	30	18,7	561,0
21.	Բազկաթոռ	70	26,6	1862,0
22.	Սեղան (մեծ)	8	106,8	854,4
23.	Սեղան` պրոյեկտորի	1	21,4	21,4
24.	Բազկաթոռ	8	25,7	205,6
25.	Սեղան (փոքր)	4	53,4	213,6
26.	Աթոռ` այցելուի	10	18,7	187,0
27.	Շերտավարագույր	70	2,1	147,0
28.	Համակարգչային ցանցը միացնող էլեկտրոնային սարք էՅՉ էՅ ԲԻ (HAB) 32 փորթս (ports)	1	33,8	33,8
29.	Գազօջախ	1	160,2	160,2

30.	Տարացուցիչ	1	24,2	24,2
31.	Սառնարան	1	134,5	134,5
32.	Համակարգիչ	1	372,2	372,2
33.	Մոնիտոր	1	79,2	79,2
	Ընդամենը			9998,2

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար

Դ. Սարգսյան